**Արձանագրություն 3**

«ԳՀԾՁԲ-ՍԿԾ-ՁԻԱՀ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ձևով
սեմինարների կազմակերպման ծառայությունների գնման ընթացակարգի հայտերի
գնահատման արդյունքների հաստատման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 11 հոկտեմբերի 2017թ.
Անցկացման ժամը՝ 15:00
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ժանետա Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տիգրան Հովսեփյան
Մարինե Ասրյան
Արևիկ Պետրոսյան
Նելլի Չոլախյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գևորգ Խանոյան

## I. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

---

(նախագահ՝ Ժանետա Պետրոսյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ուղարկելուց հետո սահմանված ժամկետում (10.10.2017թ.) ստացել ենք եզրակացություն, համաձայն որի մասնակիցը՝ «Մալետա» ՍՊԸ-ն չունի ժամկետանց հարկային պարտավորություններ և մասնակցի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացված փաստաթղթերի գնահատման

թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

| N h/h | Գնահատման չափանիշը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| | | «Մալետա» ՍՊԸ |
| 1. | Մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ | համապատասխանում է |
| **Ընդհանուր գնահատականը** | | **համապատասխանում է** |

**Հանձնաժողովը որոշեց.**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների համաձայն, «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

**ա) I տեղ՝ ընտրված (հաղթող) մասնակիցներ ճանաչել.**

N 1- N 4 չափաբաժինների համար «Մալետա» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

## II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

---

**(նախագահ՝ Ժանետա Պետրոսյան)**

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը էլեկտրոնային ձևով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը (12.10.17թ. մինչև 16.10.17թ.):

բ) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

## III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

---

**(նախագահ՝ Ժանետա Պետրոսյան)**

3.1 «ԳՀԾՁԲ-ՍԿԾ-ՁԻԱՀ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ձևով սեմինարների կազմակերպման ծառայությունների գնման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին, հասցեն՝ ք.Երևան, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, Աճառյան, 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ժ.Պետրոսյան | _____ (ստորագրություն) |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Տ.Հովսեփյան | _____ (ստորագրություն) |
| | Մ.Ասրյան | _____ (ստորագրություն) |
| | Ա.Պետրոսյան | _____ (ստորագրություն) |
| | Ն.Չոլախյան | _____ (ստորագրություն) |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Գ.Խանոյան | _____ (ստորագրություն) |